նի փակարանին վրայ գրուած է հետևեալ յիշատակարանը. «կազմեցաւ արծթ. սբ. աւետարանս ի պատրիարքութեան Տեառն Գրիգորի գերերջանիկ հայրապետին, յիշատակ Կէնճեցի միաբան տէր Առաքելին և ծնողացն Սիմէոնին և Նուրիխանին, ի սբ. ծնունդն Քրիստոսի. ի Հայոց եկեղեցին. հոգաբարձութեամբ Գաբրիէլ վրդպտ.ին, թվին ՌՃՂԷ = 1748...» (Խապ. Ցուց. տեսար Ե. էջ 310-11)։

ԱՍԱՏԽԱՆ ԱՄԴԵՑԻ.—1660ին, Աւետարան մը (ՄՁ. թ. 532) ընդօրինակել տալով կը նուիրէ Ս. Յակոբի, որու յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը. «...ի հայկազեան տոհմէն, ի մայրաքաղաքէն Համդայ, քրիստոնեայ ոմն Ասատխան անուն, ցանկացաւ սբ. մատենիս, որ և ետ գրել զսբ. աւետարանս Յովհաննէս ուսմամբ սարկաւագի յիշատակ իւրն և ծնողաց իւրոց, հաւրն Աստուածատուրին և մաւրն Պալաչխիին և կենակցուն Շահպակուն և որդւոցն Կարապետին, Յովհաննէսին և Յունանին և ամենայն արիւնառուս մերձաւորացն, և ետ զսա անջնջելի յիշատակ ի աստուածակոխ քաղաքն Երուսաղէմ. ի ղուռն սբրբոյն Յակոբայ... Արդ ծաղկեցաւ կազմեցաւ սբ. աւետարանս ձեռամբ սուտ և փուտ Խաչատուր գրչի ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, որ այժմ ասի Համիթ...ի թուականութեան հայկազեան տումարիս ՌՃԹ (=1660) ի դառն և ի նեղ ժամանակիս...» Խապ. Ցուց. տեսար Ի. էջ 548-549)։ Ասատխանի մասին տեսնել նաև (Թորոս Աղբար Բ. 439)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՌ. ԲԱՂԻՇԵՑԻ, Մբ.—1728ին միաբան էր. այս վարդապետը կը յիշուի Երեմիա վրդ. ի Բաղիրին (տպ. 1728) անթուական յիշատակարանին մէջ. «ես Ագուլեցի Եաղուբի որդի մտ. Կոստանդելս որ զայս բառազիրքս առի հալալ ընչից իմոց, և ետու սբ. Յերուսաղէմայ միաբան Բաղիշեցի Նորընծայ աբ. Աստուածատուրին» (տպագիրք թ. 35)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԱՌ. ՏՐԱՊԻԶՈՆՑԻ, Մբ.—ՉԺԷ =1468ին Ս. Փրկիչ վանքին մէջ ընդօրինակած է Մաշտոց մը ի խնդրոյ Առաքել աբ.ին (Թորոս Աղբար Բ. էջ 461)։

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԵՊՍ. Կ. ՊՈԼՍԵՑԻ, Մբ.—1804ին եպիսկոպոս կը ձեռնադրուի, Նե. Կ. Պոլսոյ և չրջակայից. 1820ին, * 1830ին։